ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Գ. ՄԱՍՆ

Գարայ—Նիի խան Գիւրդ Հիւսէյին աղի ընդունելութիւնը։—Նորա հայեացքը երկրի վիճակի վերայ։—Հայերի եւ քրդերի յարաբերութեան վերայ։—Գիւղական ուսուցիչ։

Մագուայ և Աւաջուղի խանութեանց մէջ պատելիս թէ թաթարներից, թէ քրդերից և թէ հայերից անընդհատ գովասանութիւններ էի լսել Գարայ—Նիի խան Հիւսէին աղի վերայ։ Միմիայն թաթար խաները, որոնց տան հիւր լինելու, նորանց հետ մի բաժակով օղի, ռոմ անուշ անելու և միասին մի ամանից, ձեռքով նորանց անուանի փլաւը ուտելու պատիւը ունեցայ. նոքա միայն ոչինչ չէին խօսում։ Ես ուշադրութիւն դարձրի այդ անձի վերայ, որը հասարակ ժողովրդի մէջ հեղինակութիւն ու-